

ւոյն համար կը մատուցանէ «պատարագս եւ զոհս զենմանց». զայս կ'ընէ անոր մահուան սգոյ ժամանակ, կրկնելով ապա ամէն տարի «անմոռաց յիշատակօք» (Արժ. 323-4): Գող Վասլի մահուան մորթուեցան «մատաղ անթիւ» (Ուռ. 404): Շնորհալին մատաղի տեսակաց մէջ կը թուէ եւ զայս, զոր կ'ընենք՝ կ'ըսէ՝ մեռելոց յիշատակին համար, «զի զաղքատսն կերակրելով՝ ողորմութիւն գտցեն նոքա յԱստուծոյ» (Ընդհ. 154, '55). Կամ ըստ Տարօնացւոյն՝ «ի բարեխօսութիւն առ Աստուած» եւ «առ ի թողութիւն պարտուց» (Թէոփ. 282):

Յաճախ հին արձանագրութեանց մէջ ալ կը պատահինք սոյն ճաշին, կապուած միշտ յատուկ օրերու հետ: Մին՝ զրուած ի Սանահին 1191ին, Համբարձման տօնին կը սահմանէ Պատարագներ եւ «հաց» (Ազգ. հնդ. 1911, էջ 283): Ուրիշ մը կը պատուիրէ՝ որ Հոգեգալստեան օրն «ի մեր արդեանց սեղան զնեն» (նոյն, 1901, էջ 405): Խժկօնից ուխտին նորոգիչ մը 1153ին պայման կը դնէ՝ որ տեղւոյն արեղայից մահուան «հայրն լաւ մատաղ առնէ», ինչ որ Բագնայրի բարերար մը 1233ին իրեն համար կը սահմանէ (Տեղ. 209, 185): Կայ նաեւ Վաչէի եւ ընտա-